FRONTEX

ARMENIAN

Frontex-ին բողոքելու Ձեր իրավունքը

Ձեր մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները

Դուք ունեք Ձեր ֆիզիկական և մտավոր անխաթարության հանդեպ հարգանքի, արժանապատիվ վերաբերմունքի, ապաստանի և խտրականությունից զերծ մնալու իրավունք: Սրանք այն հիմնարար իրավունքներից են, որոնք ճանաչված են եվրոպական օրենսդրությամբ:

Դուք իրավունք ունեք բողոքելու, եթե կարծում եք, որ Ձեր հիմնարար իրավունքները խախտվել են Frontex-ի՝ Եվրոպական սահմանային և առափնյա պահպանության գործակալության գործունեության ընթացքում:

Գործակալությունը Եվրոպական Միության (ԵՄ) Անդամ Պետություններին օգնում է վերահսկել ԵՄ արտաքին սահմանները: Այդ գործունեության մեջ ներգրավված են բազմաթիվ անձինք, ինչպիսիք են ծառայողները, ովքեր գրանցում են Ձեր տվյալները, երբ դուք ժամանում եք ԵՄ, աշխատակիցները, ովքեր վերցնում են Ձեր մատնահետքերը, թարգմանիչները, շների հետ աշխատողները, իրենց ծագման երկիր վերադարձված անձանց ուղեկցորդները, բժիշկները և մշակութային միջնորդները: Այս բոլոր մարդիկ պետք է հարգեն Ձեր հիմնարար իրավունքները: Հակառակ դեպքում Դուք կարող եք բողոք ներկայացնել Գործակալություն:

Ով կարող է բողոք ներկայացնել

Դուք կարող եք անկախ Ձեր տարիքից բողոք ներկայացնել, եթե կարծում եք, որ Ձեր հիմնարար իրավունքները խախտվել են Գործակալության գործունեության մեջ ներգրավված որևէ անձի կողմից:

Ձեզ կարող է ներկայացնել ցանկացած այլ անձ, փաստաբան կամ կազմակերպություն, որը կարող է բողոք ներկայացնել Ձեր անունից:

Դուք կարող եք բողոք ներկայացնել անկախ Եվրոպայում Ձեր վարչական իրավիճակից (օրինակ, ունեք արդյոք մնալու վավեր թույլտվություն, թե՝ դիմում եք ապաստանի համար):

Եթե նույն գործողություններից տուժել է մի քանի անձ, կարող եք համատեղ բողոք ներկայացնել:

Ինչպե՞ս բողոք ներկայացնել

Դուք պետք է գրավոր բողոք ներկայացնեք և տրամադրեք Ձեր կոնտակտային տվյալները: Եթե ցանկանում եք օգտագործել բողոքի ձևը, կարող եք Գործակալության կայքում դա գտնել տարբեր լեզուներով: Կարող եք նաև բողոք ուղարկել էլեկտրոնային փոստով կամ նամակով:

Խնդրում ենք նկարագրել, թե ինչպես են խախտվել Ձեր իրավունքները, որ իրավունքներն են խախտվել և որտեղ է տեղի

ունեցել խախտումը: Դուք կարող եք ցանկացած ժամանակ ուղարկել Ձեր բողոքին առնչվող լրացուցիչ նյութեր: Գործակալությունը ևս կարող է կապվել Ձեզ հետ՝ լրացուցիչ տեղեկությունների համար:

Ձեր բողոքը կարող եք ուղարկել առցանց, էլեկտրոնային փոստով կամ նամակով.

Կայք՝
https://frontex.europa.eu/fundamental-rights/complaints-mechanism/

Էլ. փոստ՝
complaints@frontex.europa.eu

Փոստային հասցե՝
Frontex - European Border and Coast Guard Agency
Fundamental Rights Officer
Plac Europejski 6
00-844 Warsaw
Poland

Ինչպե՞ս է գործում բողոքների ընթացակարգը

Գործակալության հիմնարար իրավունքների պատասխանատուն կուսումնասիրի Ձեր բողոքը և կորոշի, թե բողոքին կարո՞ղ է ընթացք տրվել: Հակառակ դեպքում, հնարավորության դեպքում, Դուք կտեղեկացվեք Ձեր բողոքի ներկայացման այլ տարբերակների մասին:

Գոյություն ունեն բողոքներն ընդունելու որոշակի չափանիշներ: Դրանք կարող եք գտնել Գործակալության կայքում՝ բողոքների ընդունման մեխանիզմի վերաբերյալ Գործակալության կանոններում:

Եթե Ձեր բողոքին կարող է ընթացք տրվել, ապա դա կուղարկվի Գործակալության գործադիր տնօրենին: Եթե Ձեր գործում ներգրավված են աշխատակիցներ ԵՄ որևէ Անդամ Պետությունից, ապա Ձեր բողոքը կուղարկվի նաև տվյալ Անդամ Պետության մարմիններին: Այդ մարմինները պատասխանատու կլինեն բացահայտումների տրամադրման և հիմնարար իրավունքների պատասխանատուին զեկուցելու համար, որն այնուհետև Ձեզ կտեղեկացնի Ձեր գործի արդյունքների մասին:

Բողոքին ընթացք տալու համար պահանջվող ժամանակը կարող է լինել տարբեր՝ կախված տվյալ գործից: Այնուամենայնիվ, Գործակալությունը հանձնառու է արդյունավետ կերպով ընթացք տալու և հետևելու Ձեր բողոքին:

Ձեր անձնական տվյալները (անունը, կոնտակտային տվյալները և այլն) կփոխանցվեն իրավասու մարմիններին, բայց միայն Ձեր համաձայնությամբ, և չեն մշակվի որևէ այլ նպատակով՝ բացի Ձեր բողոքի քննությունից:

Դուք կարող եք Ձեր գործը միևնույն ժամանակ հասցեագրել նաև այլ հաստատությունների, օրինակ, ներպետական դատարաններին, որոնք նույնպես կարող են օգնել պաշտպանել Ձեր իրավունքները:

Plac Europejski 6
00-844 Warsaw, Poland
T +48 22 205 95 00
F +48 22 205 95 01

frontex@frontex.europa.eu
www.frontex.europa.eu

© European Border and Coast Guard Agency (Frontex), 2023

Publications Office
of the European Union

FPI 23.0269

PDF:
TT-08-23-011-HY-N
ISBN 978-92-9467-874-4
doi:10.2819/72846